https://doi.org/10.46991/hc.2023.19.1.213

Armenian Conceptions of the Most Victorious Weapon and Contemporary Khachkar Culture of Artsakh[1]

Anush Safaryan
https://orcid.org/0009-0008-2370-9975
PhD student at Yerevan State University
anush.safaryan@ysu.am

Keywords: Artsakh, khachkar culture, iconography, sign of victory, war, sword.

From its first steps, the Christian ideology interpreted the Crucifixion first of all as a victory over death. In many medieval canonical and paracanonical stories and pictorial fictions, the cross is presented as the most victorious weapon. Christ thereby destroys hell, slays the dragon, conquers death, overcomes sin, etc. He is followed by various saints armed with cross-spears.

All this found its pictorial and especially scriptural expression in Khachkar culture. However, the medieval masters, characterizing the cross as a weapon or symbol of victory in the khachkar inscriptions, avoided making the cross look like a weapon or a sword in the khachkar composition.

After the Artsakh Liberation War, the idea of the cross as the most victorious weapon became relevant again. A new type of monuments were created, which iconographically simply represent the cross as a weapon or a sword, combining it with a shield and other military attributes. The most unique manifestation, which is fundamentally related to the liberation struggle of Artsakh, is the unique and new phenomenon in the khachkar culture: the khachkars called "sword-cross" or "border cross", which act as guardian-symbols.

Ամենահաղթ զենքի մասին հայկական պատկերացումները և Արցախի ժամանակակից խաչքարային մշակույթը

Անուշ Սաֆարյան
Երևանի պետական համալսարանի հայցորդ

Հիմնաբառեր՝ Արցախ, խաչքարային մշակույթ, պատկերագրություն, հաղթանակի նշան, պատերազմ, թուր:

[1] Հոդվածը տպագրվել է «22YR-6A010» ծածկագրով ծրագրի շրջանակում:

History and Culture. Journal of Armenian Studies, Vol.-1(19), 2023, pp. 213-223
Received: 23.01.2023
Revised: 15.02.2023
Accepted: 15.06.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2023

Քրիստոնեական գաղափարախոսությունը, իր առաջին քայլերից սկսած, խաչելությունը մեկնաբանել է նախնառաջ որպես մահվան հանդեպ հաղթանակ: Միջնադարյան բազմաթիվ կանոնիկ ու պարականոն պատումներում և պատկերագրական հորինվածքներում խաչը ներկայացվում է որպես ամենահաղթ զենք. Քրիստոսը դրանով կործանում է դժոխքը, սպանում վիշապին, հաղթում է մահվանը, հաղթահարում մեղքը և այլն: Նրան հետևում են խաչ-նիզակներով զինված զանազան սրբերը:

Այս ամենն իր պատկերագրական և հատկապես արձանագրական արտահայտությունն է գտել նաև խաչքարային մշակույթում: Սակայն միջնադարյան վարպետները խաչքարային արձանագրություններում, խաչը՝ որպես հաղթանակի զենք կամ նշան բնութագրելով, խուսափել են խաչքարային հորինվածքում խաչին զենքի կամ թրի տեսք տալ:

Արցախյան առաջին պատերազմից հետո խաչի՝ որպես ամենահաղթ զենքի մասին պատկերացումները կրկին արդիական դարձան: Ստեղծվեցին նոր տիպի հուշարձաններ, որոնք պատկերագրորեն ուղղակի ներկայացնում են խաչը որպես զենք կամ թուր, համադրում այն վահանի և ռազմական այլ տարրերի հետ: Ամենայուրօրինակ դրսևորումը, որը սկզբունքորեն կապված է Արցախի ազատագրական պայքարի հետ, խաչքարային մշակույթում բացառիկ ու նոր երևույթն է՝ «թուր-խաչ» կամ «սահմանային խաչ» կոչվող խաչքարը, որը հանդես է գալիս որպես պահապան-խորհրդանիշներ:

Армянские представления о самом победоносном оружии и современная хачкарная культура Арцаха

Ануш Сафарян
Аспирант Ереванского государственного университета

Ключевые слова: Арцах, культура хачкаров, иконопись, знак победы, война, меч.

С первых своих шагов христианская идеология трактовала Распятие прежде всего, как победу над смертью. Во многих средневековых канонических и параканонических рассказах и живописных беллетристиках крест представлен как самое победоносное оружие. Тем самым Христос разрушает ад, убивает дракона, побеждает смерть, побеждает грех и т. д. За ним следуют различные святые, вооруженные крестообразными копьями.

Все это нашло свое изобразительное и особенно письменное выражение в хачкарной культуре. Однако средневековые мастера, характеризуя крест как оружие или символ победы в хачкарных надписях, избегали придания кресту вида оружия или меча в композиции хачкара.

После Арцахской освободительной войны представление о кресте как о самом победоносном оружии вновь стало актуальным. Были созданы памятники нового типа, которые иконографически

просто изображают крест как оружие или меч, сочетая его со щитом и другими воинскими атрибутами. Самым уникальным проявлением, в корне связанным с освободительной борьбой Арцаха, является уникальное и новое явление в хачкарной культуре: хачкары, называемые «меч-крест» или «пограничный крест», которые выступают в роли символов-хранителей.

* * *

Ներածություն: Հոդվածի առաջին բաժնում քննության են առնվում խաչի՝ որպես ամենահաղթ զենքի, հաղթանակի խորհրդանշանի մասին քրիստոնեական պատկերացումները, դրանց պատկերագրական արտահայտությունները խաչքարերի հորինվածքում ու արձանագրական տեքստերում: Հոդվածի երկրորդ՝ հիմնական բաժինը նվիրված է Արցախյան ազատագրական պայքարի ընթացքում լայնորեն տարածված խաչքարային մշակույթին և «սահմանային» ու «թուր» խաչերի օրինակով խաչի՝ որպես ամենահաղթ զենքի պատկերագրական ու իմաստաբանական քննությանը:

Ամենահաղթ զենքի մասին հայկական պատկերացումներն ու խաչքարը: Խաչի՝ որպես ամենահաղթ զենքի և հաղթանակի խորհրդանշանի ընկալման հիմքը նախևառաջ Քրիստոսի փրկագործական խաչելությունն է, դրանով իսկ՝ մահվան հանդեպ հաղթանակը, խաչի մահվան գործիքից՝ մահը հաղթելու գործիքի վերափոխումը [Պետրոսյան, 2008, 24, 59]:

Խաչի՝ որպես հաղթանակի խորհրդանշանի հաջորդ հավանական աղբյուրը Կոստանդիանոս Մեծի տեսիլքն է, որին ականատես է լինում ողջ զորքը, և տեսիլքին հաջորդող երազը՝ նույն խաչանշանի կրկնությամբ[1]:

Մկրտության ծեսի ժամանակ ևս խաչը ներկայացվում է որպես ամենահաղթ զենք. այն ընկղմելով ջրի մեջ՝ սպանվում են վիշապը, մահը և մեղքը [Պետրոսյան, 2008, 367][2]:

Խաչը՝ որպես ամենահաղթ զենք, ներկայացվում է միջնադարյան մի շարք աղբյուրներում: Օրինակ՝ Ագաթանգեղոսն իր Պատմությունում շեշտում է. «Քանզի խաչն, որ կանգնականն՝ զյաղթականն ցուցանէ, վերնանկիւնն զհաղթութիւն ցուցանէ» [Ագաթանգեղոս, 1914, 246]:

Հովհան Մայրագոմեցին նույնպես խոսում է խաչի ամենահաղթ զորության մասին՝ գրելով. «… Այս է ամենայաղթ խաչն Քրիստոսի, յոր պարծիմք հանապազ» [Քյոսեյան, 2021, 271]: Օձնեցին VIII դարում այն ուղղակի անվանում է «զնշան յաղթութեան» [Պետրոսյան, 2008, 367]:

Խաչի՝ հաղթության զենքի և զորության գավազանի հետ նույնականության մասին են կարդում նաև շարականներում.

«Գաւազան զաւրութեան ըզխաչ քո ետուր մեզ Քրիստոս,
Եւ սովաւ յաղթեսցուք անաւրէն թըշնամւոյն:
Սա է զէն յաղթութեան սրեալ արեամբ Որդւոյն Աստուծոյ…» [Քյոսեյան, 2021, 274]:

---

[1] Կոստանդիանոսի տեսիլքում հայտնվում է «լուսեղէն» խաչանշանը, և երկնքում աստղագիր գրով երևում է «այսու յաղթեա» գրությունը: Իսկ արդեն երազում Քրիստոսը պատվիրում է զինվորական դրոշակ պատրաստել այդ նշանով, որը կծառայեր իբրև «…նշան յաղթութեան և զէն ամրութեան անվանելի», տե՛ս Վարք Կոստանդիանոսի, 1812, 246:

[2] «Մկրտության տեսարաններում հանդիպող մեկ այլ հետաքրքիր տարր է խաչով պսակված սյունը, որը պատկերվում է Քրիստոսից ոչ հեռու՝ Հորդանան գետի խորքում: Դրա նախատիպն է այն սյունը, որը, ըստ VI-VIII դարերի ուխտավորների, տեղադրված է եղել Հորդանանի այն մասում, որտեղ, ավանդության համաձայն, կատարվել է մկրտությունը: … Այն աճում է ջրի խորքերից և փաստորեն կրկնօրինակում է Քրիստոսին», տե՛ս Աբրահամյան, 2019, 367: [3] Խաչ-գավազանի կիրառությունը տեսնում ենք նաև «Միքայել հրեշտակապետի հրաշքը Խոնոխում» տեսարանի պատկերագրության մեջ, որտեղ հավատացյալի աղոթքներով հայտնված Միքայել հրեշտակապետի խաչ-գավազանի հարվածից առաջացած ճեղքը փրկում է իր անունը կրող տաճարը խորտակումից, տե՛ս Евсеева, Комашко, и др., 2002, 65:

Հաջորդ հավանական աղբյուրը, որը խաչին կարող է հաղորդել զենքի գործառույթ «Դժոխքի ավերումը և հոգիների փրկությունը» անվավեր պատմությունն է, որի ժամանակ, ըստ բազմաթիվ գրավոր և պատկերագրական աղբյուրների, Քրիստոսը խաչն օգտագործում է որպես զենք. դրանով նա տապալում է դժոխքի դարպասները, խոցում վիշապ-օձին՝ մեռյալների հոգիներն ազատելով դժոխքից: Այս տեսարանում Քրիստոսի ձեռքին հաճախ պատկերվում է խաչվառ (ձողաբարձ դրոշ), որը կարմիր խաչի պատկեր է սպիտակ հենքի վրա կամ հակառակը [Холл, 1996, 528], իսկ ավելի հաճախ Քրիստոսի ձեռքին պատկերվում է խաչ-նիզակ, որը ծառայում է որպես զենք կամ գործիք՝ խորհրդանշելով դժոխքի և մահվան հանդեպ հաղթանակը [Покровский, 2001, 506]:

Դժոխքի ավերումը պատկերող տեսարաններ հաճախ են հանդիպում նաև խաչքարային հորինվածքներում, ինչպես, օրինակ, Սևանի Առաքելոց վանքի՝ 1653 թվականի, Նորատուսի՝ XVI-XVII դարի, Հացառատի՝ 1551 թվականի խաչքարային հորինվածքներում (Նկ. 1-3): Այս պատկերաքանդակները, որպես կանոն, տեղադրվում են խաչքարային հորինվածքից ներքև՝ կարծեք բուն հորինվածքից դուրս: Հորինվածքի կենտրոնում երկարաճամ Քրիստոսն է՝ խաչ-նիզակը ձեռքին, և դժոխքի կործանված դարպասները: Որպես կանոն պատկերված են նաև Ադամն ու Եվան: Հացառատի օրինակում պատկերված են նաև երկու այլ կերպարներ ևս՝ ծնկած և ձեռքերը վեր պարզած: Դատելով Գավառի մեկ այլ խաչքարային հորինվածքում առկա արձանագրությունից, այդ երկու աղոթողների կերպարներն ամենայն հավանականությամբ Մարիամն ու Հովհաննես Ավետարանիչն են: Սևանի Առաքելոց վանքի օրինակում ներառված է նաև կենաց ծառը: Այս տեսարանում Քրիստոսը ձեռքի խաչ-գավազանով խոցում է վիշապ-օձին, մյուս ձեռքով Ադամին և Եվային դուրս է բերում դժոխքից: Այն որոշակի տարածում է գտնում նաև ուշմիջնադարյան տապանաքարյային պատկերաքանդակում:

Բազմաթիվ են նաև խաչ-նիզակներով զինված զանազան վիշապասպան սրբերի մասին պատմություններն ու պատկերագրությունը: Ամենատարածվածներից է վիշապասպան սրբեր Գևորգի, Թեոդորոսի, Սարգսի պատկերագրությունը: Վիշապասպան սրբերի պատկերագրության քննության տեսանկյունից հետաքրքրական են Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու հյուսիսային ճակատին այս երեք հեծյալ սրբերի պատկերները, որոնք հանդես են գալիս համատեղ՝ սրբեր Թեոդորոսը (վիշապ-օձ սպանելիս), Սարգսը (հովազ կամ առյուծ սպանելիս) և Գևորգը (մարդ՝ Դիոկղետիանոս արքային սպանելիս) [Սիմոնյան, 2019, 418, նկ. 4]:

Այս սրբերի պատկերագրությունն իր տեղն է գտել նաև խաչքարային հորիվածքներում, օրինակ՝ Գտչավանքի՝ XIդարի խաչքարի օրինակը, որի հորինվածքի եզրագոտում հեծյալ սուրբ Գևորգը կամ Թեոդորոսը խաչգավազանով խոցում է վիշապին (Նկ. 5):

Խաչելությունն ու խնդրարկությունը ներկայացնող խաչքարային հորինվածքներում հաճախ տեսարանները լրացվում են նաև խաչ-նիզակներով զինված երկու հրեշտակներով (հավանաբար Գաբրիելն ու Միքայելը[1]), որոնք խոցում են վիշապ օձերին, ինչպես, օրինակ, Առինջի՝ 1548 թվականի (այժմ՝ Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարան), Գավառի՝ 1707 թվականի Սուրբ Ստեփանոս մատուռի հյուսիսի խաչքարային հորինվածքներում (Նկ. 6, 7):

[1] Խաչ-գավազանի կիրառությունը տեսնում ենք նաև «Միքայել հրեշտակապետի հրաշքը Խոնոխում» տեսարանի պատկերագրության մեջ, որտեղ հավատացյալի աղոթքներով հայտնված Միքայել հրեշտակապետի խաչ-գավազանի հարվածից առաջացած ճեղքը փրկում է իր անունը կրող տաճարը խորտակումից, տե՛ս Евсеева, Комашко, и др., 2002, 65:

Ուշագրավ է, որ խաչքարային արձանագրությունները ևս խաչը նկարագրում են որպես թշնամիներին հաղթող և աստվածային արյամբ սրված, չբթացող զենք, ինչպես, օրինակ, Եղեգիսի՝ 1340 թվականի խաչքարային արձանագրության սկիզբը. «Այս գայիսոն մխեալ արեամբն աւծելոյն Յ[իսուս]ի...», կամ Ապարանքի 1194 թվականի արձանագրությունը. «Զէն յաղթութե[ան] ընդդէմ թշնամոցն սուր անբ [թելի սր]ալ արեամբ որդոյն Ա[ստծո]յ» [Պետրոսյան, 2008, 368]: Ցաղաց Քարի՝ 1275 թվականի խաչքարային արձանագրությունն էլ խաչը ներկայացնում է աստվածային արյունով մխված զենք. «… Ես Թաթեոս նուաստ ծառայ եւ երկր[պագու] խաչելոյն, ըստացայ զխաչս աշտարակ անմատոյց եւ զէն Ածամուխ…» [Մելքոնյան, 1996, 65]:

Ամենահաղթ զենքն Արցախի ժամանակակից խաչքարային մշակույթում: Ինչպես տեսանք,՝ խաչը որպես ամենահաղթ, զենք իր պատկերագրական և արձանագրական արտահայտությունն է գտել նաև խաչքարային մշակույթում: Սակայն միջնադարյան վարպետները, խաչքարային արձանագրություններում խաչը՝ որպես հաղթանակի զենք կամ նշան բնութագրելով, խուսափել են խաչին զենքի կամ թրի տեսք տալ:

Արցախյան ազատամարտից հետո ավանդական այս պատկերացումները կրկին արդիական դարձան: Ստեղծվեցին նոր տիպի հուշարձաններ, որոնք պատկերագրորեն ոչ թե ակնարկում են, այլ ուղղակի ներկայացնում են խաչը՝ որպես զենք կամ թուր, համադրում վահանի և այլ ռազմական տարրերի հետ:

Ընդհանրապես Արցախի ժամանակակից խաչքարային մշակույթը Արցախյան ազատագրական պատերազմի տեսանկյունից դիտարկելը բավականին հետաքրքրական է, քանի որ դրանց գերակշիռ մասը նվիրված է Արցախյան պատերազմներում զոհվածների և անհետ կորածների հիշատակին, տարած հաղթանակին:

Որոշ դեպքերում դրանք խաչքարերի դասական օրինակների կրկնություններ են, և խաչքարային արձանագրության բացակայության պարագայում դժվար է գտնել կապը պատերազմի, պաշտպանության կամ հաղթանակի հետ: Առավել տարածված են «ռազմական» թեմատիկայով խաչքարերը: Դրանց հորիվածքներում ներառված են թուրը, վահանը, արծիվը և ռազմական այլ տարրեր, որոնք հանդես են գալիս տարբեր համադրություններով[1] (Նկ. 8):

Վարպետները փորձել են այս մանրամասների միջոցով հաղթական-պաշտպանական կերպար հաղորդել հորինվածքին և դրանով իսկ այն կապել ազատագրական պատերազմի թեմային:

---

[1] Արծիվը ուժի և հաղթանակի հնագույն խորհրդանիշներից է, և այդ իմաստով այն պատկերվում է բազմաթիվ ժողովուրդների զենքերի վրա, տե՛ս Холл, *1996, 405-406:* Արծվի կերպարը խաչքարային հորինվածքներում գերիշխող դիրք է ձեռք բերել հատկապես XVI-XVII դարերում՝ ամենասերտ կապը ցուցաբերելով անմահության և հարության քրիստոնեական խորհրդաբանության հետ, տե՛ս Պետրոսյան, 2008, 298: Վարպետների մի մասը, իհարկե, քաջածանոթ լինելով այս ամենին, արծիվը ներառել է խաչքարային հորինվածքում, սակայն մյուս մասը կարծեք ինքնուրույն է փորձում մեկնաբանել այն՝ որպես կռված կամ զոհված ռազմիկների հզորությունն ու քաջությունը երևան հանող իրողություն:

Ընդհանրապես միջնադարում բավականին տարածված էր ռազմիկներին համեմատել և ներկայացնել որպես «խրոխտ առյուծ կամ սրաթռիչ արծիվ»: Նշված պատկերումները տարածված էին տապանաքարայի հորինվածքներում, աշխարհիկ և եկեղեցական շինությունների ինչպես նաև արհեստագործական տարբեր իրերի վրա, տե՛ս Պետրոսյան, 2001, 73:

Ինչ վերաբերում է թրին, նկատենք, որ Արցախի ավանդական խաչքարային պատկերաքանդակներում թուրը քիչ է պատկերվել. որպես զենք հիմնական տեսակ պատկերում էին նիզակը: Սակայն թրի օգտագործումը մեզ շրջապատող բազմաթիվ հուշարձաններում հանգեցրեց նրան, որ որպես «հաղթականի զենք»՝ հենց թուրն ընկալվի, և խոսքն այստեղ միայն խաչքարային հորինվածքներում պատկերվող թրի մասին չէ:

Ամենայուրօրինակ դրսևորումը, որը սկզբունքորեն կապված է Արցախի ազատագրական պայքարի հետ, խաչքարային մշակույթում բացառիկ և նոր երևույթն է՝ «թուր-խաչերը» կամ «սահմանային խաչերը», որոնք նաև որպես պահապան-խորհրդանիշներ են (Նկ. 9, 10)։ Նշենք, որ այս խաչքարերի հեղինակն խաչքարագործ վարպետ Վարազդատ Համբարձումյանն է։

Կենտրոնական խաչը պատկերում է մասամբ ձևափոխված թուր։ Այն, ի տարբերություն սովորական թրի, քառաթև է։ Մենք չենք տեսնում սովորական թուր, որն ունի դաստակ, հորիզոնական բաժանարար և սայր, այն քառասայր է. վարպետը կարծես փորձել է պատկերել նրա ուժն ու զորությունը բոլոր ուղղություններով։ Որպես կանոն խաչահատումը ընդգծված է բլթակով։

Այս խաչքարերի երկրորդ կարևոր բաղադրիչը վահանն է, որը փոխարինում է դասական վարդյակին, որը նաև վարպետը պատկերում է որպես պաշտպանության խորհրդանշան։ Վահան-վարդյակը, որպես կանոն, կազմվում է հյուսածո երկրաչափական զարդերով։ Ավելի ներքև տեսնում ենք թրի հարվածից առաջացած կայծակ-ճառագայթներ, որոնք պատկերելիս Վ. Համբարձումյանը ոգեշնչվել է Հակոբ Կոջոյանի «Սասունցի Դավիթ» կտավից։ Ընդհանրապես ուշ միջնադարում և հատկապես եկեղեցական գործածության մեջ բազմաթիվ խաչերի խաչահատումից ճառագայթներ են տարածվում։ Մ. Օրմանեանի բնորոշմամբ դա հենց «հայկական խաչն» է, որը խաչահատման անկյուններից դուրս եկող ճառագայթներ ունի [Օրմանեան, 1979, 130, հմմտ. Պետրոսյան, 2008, 49-50]։ Սակայն այս պարագայում ամենայն հավանականությամբ գործ ունենք պարզ ֆիզիկական երևույթի հետ, երբ մետաղով՝ թրով, քարին հարվածելու արդյունքում կայծեր են առաջանում։

Պատվանդանը սովորաբար կրում է «Խաչ Քո եղիցի մեզ ապաւեն» արձանագրությունը։

Նման խաչեր կանգնեցվել են Արցախի պաշտպանական գոտիներում՝ Վարանդայում (Ֆիզուլի), Ներքին Ճարտարում, Սպիտակ Շենում, Մարտակերտում, Մատաղիսում, Տոնաշենում (Եղակիր), Ջրականում (Ջաբրայիլ) և այլուր։

Եզրակացություն: Ինչպես կարելի է մակաբերել մեր քննությունից, խաչի զինական կերպարի պատկերումը մի նոր երևույթ է։ Այն կարծեք ինչ-որ չափով շեղում է քրիստոնեական ընդհանուր գաղափարախոսությունից, քանի որ խաչը, որը միտված է ապագային, դասական խաչքարերում երբեք չի պատկերվել որպես թուր կամ զենք։ Այս խաչքարերի օրինակով մենք այսօր կարող ենք խոսել խաչքարերի նոր գործառույթի մասին, որը դասական խաչքարը չի ունեցել։ Եվ եթե միջնադարում ավելի կարևորել են խաչի փրկագործական զորությունը, քան նրա մարտական կերպարը, ապա ներկայումս մենք դա փոփոխված ենք տեսնում։ Արցախի ժամանակակից խաչքարային մշակույթում պատկերագրորեն ոչ թե ակնարկում են, այլ ներկայացնում են խաչի զինական կերպարը՝ պատկերելով այն որպես զենք կամ թուր։

Արցախյան 44-օրյա պատերազմից հետո կարելի է վավերացնել այդ խաչքարերի ոչնչացումն ու վանդալիզմը Ադրբեջանի կողմից ու հայերի ջանքերը՝ այդ ամենը տեղափոխելու և նորից կանգնեցնելու նոր միջավայրում։

Պատերազմական կամ ռազմական պատկերագրությունն ընդհանրապես կոնֆլիկտի ամենալավ արտահայտչամիջոցներից է, և Արցախի ժամանակակից խաչքարային մշակույթում մենք տեսնում ենք դրա ընդգծված դրսևորումը։

Նկ. 1. Սևանի Առաքելոց վանքի խաչքար (1653 թ.), լուս.՝ Հ. Պետրոսյանի:

Նկ. 2. Նորատուսի խաչքար (XVI-XVII դդ.), լուս.՝ Հ. Պետրոսյանի:

Նկ. 3. Հացառատիխաչքար (1551 թ.), լուս.՝ Հ. Պետրոսյանի:

Նկ. 4. Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու հյուսիսային ճակատին երեք հեծյալ սրբերի պատկերագրությունը, լուս.՝ patmakanhetq.com-ի:

Նկ. 5. Գտչավանքի խաչքարի մանրամասն (XIII դ.), լուս.՝ Հ. Պետրոսյանի:

Նկ. 6. Առինջի խաչքարի մանրամասն (1548 թ.), լուս.՝ Հ. Պետրոսյանի:

Նկ. 7. Գավառի Սուրբ Ստեփանոս մատուռի հյուսիսում 1707 թ.խաչքարի մանրամասն, լուս.՝ Ս. Բաղդասարյանի:

Նկ. 8. Խաչքար՝ «ռազմական» թեմատիկայով, լուս.՝ Ա. Գրիգորյանի:

Նկ. 9. Թուր-խաչ, լուս.՝ Վ. Համբարձումյանի:

Նկ. 10. Թուր-խաչ, լուս.՝ Վ. Համբարձումյանի:

Գրականության ցանկ

Աբրահամյան Լ. 2019, Քրիստոսը որպես վիշապամարտիկ. եկեղեցական ավանդույթը եվ նկարչի հիշողությունը, Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, Երևան, էջ 361-370:

Ագաթանգեղոս 1914, Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս:

Մելքոնյան Հ. 1996, Նորահայտ արձանագրություններ Ցաղաց Քար վանքից, «Հանդէս ամսօրեայ», 62-85:

Պետրոսյան Հ. 2001, «Մանուկի» կերպարը ուշմիջնադարյան հայ տապանաքարային քանդակում (XV-XVIII դարեր) // Թուխ մանուկ, Երևան:

Պետրոսյան Հ. 2008, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, «Փրինթինֆո»:

Սիմոնյան Լ. 2019, Քարացած վիշապները և վիշապասպան սրբերը հայոց մեջ. առասպել և հիշողություն, Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, Երևան, էջ 414-427:

Աւգերեն Մ. 1812, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, Վենետիկ, Վարք սրբոյն Կոստանդիանոսի թագաւորին, և մօրն նորա սուրբ դշխոյին Հեղինեայ, հ. Գ, էջ 239-273:

Քյոսեյան Հ. 2021, Հայ միջնադարյայ արվեստի աստվածաբանություն, Երևան:

Օրմանեան Մ. 1979, Ծիսական բառարան, Անթիլիաս, http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=80&dt=HY_HY&pageNumber=130:

Покровский Н. 2001, Евангелие в памятниках иконографии, Москва, Прогресс-Традиция.

Холл Дж. 1996, Словар*ь сюжетов и символов в искусстве, пер. с английского А. Е. Майкапара, Москва, «Крон-пресс».*

Евсеева Л., Комашко Н.,и др. 2002, История иконописи, VI-XX века, Москва, “АРТ-БМБ”.